Հավելված 6
ՎԲԿ-ՀՄԱՊՁԲ-21/47* ծածկագրով
ՀՐԱՏԱՊ ՄԵԿ ԱՆՁԻՑ ԳՆՄԱՆ հրավերի

ԲԺՇԿԱԿԱՆ ՊԱՐԱԳԱՆԵՐԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՎԲԿ-ՀՄԱՊՁԲ-21/47

ք. Վանաձոր 16 03 2021թ.

ՎԱՆԱՁՈՐԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՓԲԸ -ն ի դեմս տնօրեն Վ.Մկրտչյանի, որը գործում է ք.Վանաձոր, Գ. Նժդեհի փողոց 2/42 -ի կանոնադրության հիման վրա, այսուհետ <<Գնորդ>>, մի կողմից, և Բեսթ Սմարթ Մեդիքլ ՍՊԸ -ը, ի դեմս տնօրենի, որը գործում է կանոնադրության հիման վրա, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 2 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են __2__ օրից ավելի,

2.1.8 Ընդունել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2 Գնորդը պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 Վաճառողն իրավունք ունի՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ << օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Որակավորման և պայմանագրի ապահովում ներկայացրած անձը պարտավոր է ապահովումների գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է 6 448 800 ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:[18][29][1]Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:[2]

3.2 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված պպրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

3

2. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված ____ աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2

---

[18] *Եթե Վաճառողի կողմից գնային առաջարկը ներկայացվել է առանց ԱԱՀ-ի, ապա պայմանագիրը կնքելիս «ներառյալ ԱԱՀ-ն» բառերը հանվում են:*

[19] *Վաճառողը կարող է հրաժարվել առաջարկված կանխավճարից կամ դրա մի մասից: Ընդ որում կնքվելիք պայմանագրում կանխավճարը սահմանվում է Գնորդի և Վաճառողի միջև համաձայնեցված չափով: Եթե պայմանագրով չի նախատեսվում կանխավճարի հատկացում, ապա սույն կետը հանվում է նախագծից:*

[20] *Սույն կետը հանվում է պայմանագրի նախագծից, եթե գնվելիք ապրանքը չի հանդիսանում հիմնական միջոց:Իսկ եթե գնվելիք ապրանքը հանդիսանում է հիմնական միջոց, ապա երաշխքային ժամկետը չպետք է պակաս լինի 365 օրացուցային օրից*

կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացող բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:[214]Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ապրանքի մատակարարումը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտվորությունները լրիվ կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

---

[21] *Եթե պայմանագիրը կնքվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա, ապա տուգանքը հաշվարկվում է այն համաձայնագրի գնի նկատմամբ, որի շրջանակում արձանագրվել է սպանձնված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման հանգամանքը:*

Եթե պայմանագիրը ներառում է մեկից ավել չափաբաժին, ապա տուգանքը հաշվարկվում է պայմանագրով այդ չափաբաժնի համար սահմանված ընդհանուր գնի նկատմամբ:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նպատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործառնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Եթե պայմանագիրն իրականացվում է գործակալության պայմանագիր կնքելու միջոցով.

1) Վաճառողը պատասխանատվություն է կրում գործակալի պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար.

8.7 Եթե պայմանագիրն իրականացվում է համատեղ գործունեության (կոնսորցիումի) պայմանագիր կնքելու միջոցով, ապա այդ պայմանագրի մասնակիցները կրում են համատեղ և համապարտ պատասխանատվություն: Ընդ որում, կոնսորցիումի անդամի կոնսորցիումից դուրս գալու դեպքում պայմանագիրը միակողմանիորեն լուծվում է և կոնսորցիումի անդամների նկատմամբ կիրառվում են պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցները:[246]

8.8 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը, իսկ Վաճառողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե մատակարարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

---

22 *Պետական բյուջեի միջոցների հաշվին պարտավորություններ չառաջացնող գնումների դեպքում սույն նախադասությունը պայմանագրից*

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատա[illegible] հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստ[illegible] Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժե[illegible] ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.11 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Գնորդը այն ուղարկվում է նաև Վաճառողի էլեկտրոնային փոստին: 8.12 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.13 Պայմանագիրը կազմված է ____ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.14 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
«Վանաձորի բժշկական կենտրոն» ՓԲԸ	<<Բեսթ Սմարթ Մեդիքլ>> ՍՊԸ
Ք.Վանաձոր, Գ. Նժդեհի 2/42	ք. Երևան, Չարենցի փ., 27ա, բն.2
<ՀայԲիզնեսբանկ>Վանաձոր մ/դ	ՀՎՀՀ 02624338
Հ/Հ 1150004484110100	ԷՎՈԿԱԲԱՆԿ ՓԲԸ
ՀՎՀՀ 06945592	1660010838 4800
	smedical@bk.ru
	098 91 67 67
Տնօրեն Կ. Մկրտչյան	Տնօրեն Պիգորյան
ստորագրություն Կ.Տ	ստորագրություն/ Կ.Տ

Անհրաժեշտության դեպքում պայմանագրում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:

Հավելված N 1
« 16 » 03 2021 թ. կնքված
ՎԲԿ-ՀՄԱԱՊՁԲ-21/47 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	տեխնիկական բնութագիրը	Ապրանքի					մատակարարման		
				ապրանքային նշանը, մակիշը և արտադրողի անվանումը **	չափման միավորը	միավոր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	հասցեն	ենթակա քանակը	ժամկետը***
1	33141182	Կաթետր ախտորոշիչ	Աշխատանքային երկարությունը 80-ից 125 սմ-ի միջակայքում:Չափսը 4-6 Fr: Պատրաստման նյութը՝ պոլիուրեթան/նեյլոն: Ծայրը պոլիուրեթանային ռենտգենոկոնտրաստ, ատրավմատիկ: Համատեղելի ուղղորդիչ լարի չափսը՝ 0,038": Ճնշումը 500-1200 PSI Տեսակները՝ JL3.5, JL4.0, JL 4.5, JL 5.0, JR3.5, JR 4.0, JR 4.5, JR 5.0, AL1.0, AL2.0, AL3.0, AR1.0,AR2.0, AR3.0, IM, MP2.5, MP3.0, MP 3.5, MP4.0, TG3.5, TG 4.0, TG 3.5SH, TG4.0 SH և Mitsudo RM 3.5, RM4.0, RM3.5SH, RM4.0SH, LCB; RCB, PIG, PIG145; PIG155 կամ համարժեք: CE որակի սերտիֆիկատի առկայություն:	AsahiIntecc c.o. LTD	հատ	7200	1440000	200	Ք.վանաձոր Գ.Նժդեհի 2/42	200	Մարտ-ապրիլ

2	33141182	Կաթետր ուղղորդիչ	Աշխատանքային երկարությունը 100-110 սմ-ի միջակայքում: Չափսը 5-8 Fr: Պատրաստման նյութը՝ արտաքին՝ նեյլոն, միջին՝ երկշերտանի հյուսապատում, ներքինը՝ PTFE (պոլիտետրաֆթորեթիլեն): Ծայրը՝ ռենտգենոկոնտրաստ, ատրավմատիկ: Համատեղելի ուղղորդիչ լարի չափսը՝ 0,038" Տեսակները՝ JL3.5, JL3.5SH, JL3.5ST, JL3.5STSH, JL 4.0, JL 4.5, JR3.5, JR3.5SH , JR4.0, JR4.0 SH, AL0.75, AL0.75SH, AL1.0, AL1.0SH, AL1.5, AL1.5SH, AL2, AL2SH, SAL0.75, SAL1.0 SH, SAL1.5, AR1.0, AR2.0, PB3.0, PB3.0 SH,PB3.5 , PB3.5SH, PB4.0 , PB4.0SH,SPB3.0, SPB3.0SH, RB0.75, RB1.0, SC3.5 , SC4.0,HS01, HS02, IM, IMSH, MP01, MP01 SH, MP02, MP02 SH: CE որակի սերտիֆիկատի առկայություն:	AsahiIntecc c.o. LTD	հատ	23700	1659000	70	Ք.վանաձ որ Գ.Նժդեհ ի 2/42	70	Մարտ-ապրիլ
3	33141211	Մանիֆոլդի հավաքածու	Ծորակների թափանցիկ համակարգ ինտերվենցիոն միջամտությունների ժամանակ հեղուկի մատակարարման համար (կոնտրաստ, ֆիզիոլոգիական լուծույթ և այլ): Մինչև 1050psi ամրություն: Luer-Lock միացում: Եռակի հոսքային տարբերակ, ծորակներին միացված են ռենտգենացայտուն նյութի համար նախատեսված երակային համակարգ, ֆիզ լուծույթի համակարգ և ճնշման փոխակերպիչին գնացող երկարացուցիչ՝ 120սմ: Կոնտրաստի ներմուծման խողովակի արտաքին լուսանցքի տրամագիծը 3մմ (0.118inch),ներքինը՝1.3մմ (0.0515 inch): CE որակի սերտիֆիկատի առկայություն:	Lepu Medical	հատ	3200	12800	4	Ք.վանաձ որ Գ.Նժդեհ ի 2/42	4	Մարտ-ապրիլ

4	33141211	ՈՒղղորդիչ կորոնար	Առաջին ընտրության կորոնար ուղղորդիչ հիդրոֆիլիկ SLIP-COAT ծածկով, աշխատում է բոլոր տեսակի ստենտերին հետ, 18,5 սմ երկարությամբ, ծայրակալ 0,4-0,8գ., ծայրակալի ռենտքենանցանելիություն 3 սմ, երկարությունը 180սմ և 300 սմ , տրամագիծը՝ 0.36mm (0.014inch): CE որակի սերտիֆիկատի առկայություն: SION/SION Blue/SION Black(Asahi), կամ համարժեք:	AsahiIntecc c.o. LTD	հատ	32500	2112500	65	Ք.վանաձոր Գ.Նժդեհի 2/42	65	Մարտ-ապրիլ
5	33141137	Դիլատացիոն կորոնար կաթետր	Սրտանոթային բալոն-կաթետր Կաթետրի երկարությունը՝ 140սմ: Ծայրակալի ռենտգենոկոնտրաստ մարկերը՝ 2մմ, ծայրակալի դիստալ տրամագիծը՝ 2.36F (1.0-1.75մմ), 2.55F (2.0-3.0մմ), 2.7F (3.75-4.0մմ), ծայրակալի պրոքսիմալ տրամագիծը՝1.9F, ծածկույթը՝ Slidematrix Hydrophilic, բալոնի նյութը՝ Pebax, մինչև պրոքսիմալ հատվածը՝՝ Invio ™: Մուտքի տրամագիծը՝0.016", նորմալ ճնշումը՝ 6 atm, հաշվարկային պոռթման ճնշումը (RBP)՝ 16 atm : Անցումային պրոֆիլը՝ 0.0186"/1.0մմ: Տրամագիծը 140սմ-ի համար՝ 1.25, 1.5, 1.75, 2.0, 2.25, 2.5, 2.75, 3.0, 3.25, 3.5, 4.0, երկարությունը՝ 5, 8, 10, 12, 15, 20, 30մմ, տրամագիծը 150սմ-ի համար՝ 1.25, 1.5, 1.75, 2.0, երկարությունը՝ 5, 8, 10, 12, 15, 20, 30մմ: Համատեղելի է 5F - 0,014" ուղղորդիչ կաթետրի հետ: Sapphire II,կամ համարժեք	Sapphire II	հատ	29500	590000	20	Ք.վանաձոր Գ.Նժդեհի 2/42	20	Մարտ-ապրիլ
6	33141137	Դիլատացիոն կորոնար կաթետր	Սրտանոթային բալոն-կաթետր . Կաթետրի երկարությունը՝140սմ: Ծայրակալի ռենտգենոկոնտրաստ մարկերը՝ 2մմ, ծայրակալի դիստալ տրամագիծը՝ 2.36F (1.75-2.0մմ), 2.55F (2.25-3.5մմ), 2.6F (3.75-5.0մմ),ծայրակալի պրոքսիմալ	Sapphire II	հատ	29500	442500	15	Ք.վանաձոր Գ.Նժդեհի 2/42	15	Մարտ-ապրիլ

			տրամագիծը՝2.0F, ծածկույթը՝ Slidematrix Hydrophilic, բալոնի նյութը՝ Nylon,մինչև պրոքսիմալ հատվածը՝ Invio ™:Մուտքի տրամագիծը՝ 0.0172", նորմալ ճնշումը՝ 12 atm, հաշվարկային պոռթման ճնշումը (RBP)՝ 20 atm (1.75-4.0մմ), 18 atm (4.5-5.0մմ): Անցումային պրոֆիլը՝ 0.036"/0.91մմ: Տրամագիծը՝ 1.75 , 2.00, 2.25, 2.50, 2.75, 3.00, 3.25, 3.50, 3.75, 4.00, 4.50, 5.00, երկարությունը՝ 5, 8, 10, 12, 15, 20, 30մմ: Համատեղելի է 5F - 0,014" ուղղորդիչ կաթետրի հետ: Sapphire II NC կամ համարժեք								
7	33141211	ՈՒղղորդիչ կորոնար	Պոլիտետրաֆլուրոէթիլենային ծածկ, հիդրոֆիլ կորոնար ուղղորդիչ, 16սմ երկարությամբ պոլիմերային մեկուսացնող ծածկով, ծայրակալը՝ 1.0գ, ծայրակալի ռենտգենանցանելիություն՝ 16սմ, երկարությունը՝ 190սմ, տրամագիծը՝ 0.36/0.26mm (0.014/0.010inch): CE որակի սերտիֆիկատի առկայություն: Fielder XT-A(Asahi) կամ համարժեք:	AsahiIntecc c.o. LTD	հատ	48000	96000	2	Ք.վանաձ որ Գ.Նժդեհ ի 2/42	2	Մարտ-ապրիլ
8	33141211	ՈՒղղորդիչ կորոնար	Պոլիտետրաֆլուրոէթիլենային ծածկ, հիդրոֆիլ կորոնար ուղղորդիչ, 16 սմ երկարությամբ պոլիմերային մեկուսացնող ծածկով, ծայրակալը՝ 0.6գ, ծայրակալի ռենտգեն անցանելիություն՝ 16սմ, երկարությունը՝ 190սմ,տրամագիծը՝ 0.36/0.26մմ(0.014/0.010inch): CE որակի սերտիֆիկատի առկայություն: Fielder XT-R(Asahi) կամ համարժեք:	AsahiIntecc c.o. LTD	հատ	48000	96000	2	Ք.վանաձ որ Գ.Նժդեհ ի 2/42	2	Մարտ-ապրիլ

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
«Վանաձորի բժշկական կենտրոն» ՓԲԸ Ք.Վանաձոր, Գ. Նժդեհի 2/42 <ՀայԲիզնեսբանկ>Վանաձոր մ/ղ Հ/Հ 1150004484110100 ՀՎՀՀ 06945592 Տնօրեն Վ. Մկրտչյան _____ Կ.Տ /ստորագրություն/	<<Բեսթ Սմարթ Մեդիքլ>> ՍՊԸ ք. Երևան, Չարենցի փ., 27ա, բն.2 ՀՎՀՀ 02624338 ԷՎՈԿԱԲԱՆԿ ՓԲԸ 16600108384800 smedical@bk.ru 093-91-67-67 Տնօրեն Գ. Գրիգորյան _____ /ստորագրություն/ Կ.Տ

Հավելված N 2
« 16 » 03 2021 թ. կնքված
ՎԲԿ-ՀՄԱՊՁԲ-21/47 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

<< դրամ

Ապրանքի															
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2021 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	33141182	Կաթետր ախտորոշիչ	%	%	%	288000	432000	576000	720000	864000	1008000	1152000	1296000	1440000	1440000
2	33141182	Կաթետր ուղղորդիչ,	%	%	%	331800	497700	663600	829500	995400	1161300	1327200	1493100	1659000	1659000
3	33141211	Մանիֆոլդի հավաքածու	%	%	%	2560	3840	5120	6400	7680	8960	10240	11520	12800	12800
4	33141211	ՈՒղղորդիչ կորոնար	%	%	%	422500	633750	845000	1056250	1267500	1478750	1690000	1901250	2112500	2112500
5	33141137	Դիլատացիոն կորոնար կաթետր	%	%	%	118000	177000	236000	295000	354000	413000	472000	531000	590000	590000
6	33141137	Դիլատացիոն կորոնար կաթետր	%	%	%	88500	132750	177000	221250	265500	309750	354000	398250	442500	442500
7	33141211	ՈՒղղորդիչ կորոնար	%	%	%	19200	28800	38400	48000	57600	67200	76800	86400	96000	96000
8	33141211	ՈՒղղորդիչ կորոնար	%	%	%	19200	28800	38400	48000	57600	67200	76800	86400	96000	96000

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով*
*** հրավերում գումարները նշվում են տոկոսով, իսկ պայմանագիրը կնքելիս տոկոսի փոխարեն նշվում է կոնկրետ գումարի չափ*

ԳՆՈՐԴ

«Վանաձորի բժշկական կենտրոն» ՓԲԸ
Ք.Վանաձոր, Գ. Նժդեհի 2/42
<ՀայԲիզնեսբանկ>Վանաձոր մ/ղ

Հ/Հ 1150004484110100
ՀՎՀՀ 06945592
Տնօրեն Վ. Մկրտչյան

ստորագրություն

Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ

<<Բեսթ Սմարթ Մեդիքլ>> ՍՊԸ
ք. Երևան, Չարենցի փ., 27ա, բն.2
ՀՎՀՀ 02624338
ԷՎՈԿԱԲԱՆԿ ՓԲԸ
16600108384800
smedical@bk.ru
093-91-67-67
Տնօրեն Գ. Գրիգորյան

/ստորագրություն/

Կ.Տ